Ա/Ձ Վարուժան Ավետիսյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 478 լիցենզիան վերաձևակերպելու մասին

2022-10-18

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 176 Ա
18.10.2022

Ա/Ձ Վարուժան Ավետիսյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 478 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «իթ» կետով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի 36-րդ կետով, *հաշվի առնելով այն, որ* Ա/Ձ Վարուժան Ավետիսյանը 26.09.2022թ. դիմել է ՀՀ կենտրոնական բանկ՝ իրեն տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան վերաձևակերպելու միջնորդությամբ, *հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2022թ. հոկտեմբերի 14-ի թիվ 43 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

Վերաձևակերպել Ա/Ձ Վարուժան Ավետիսյանին տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 478 լիցենզիան՝ կապված Վարուժան Ավետիսյանի անձնագրի տվյալների փոփոխության հետ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան

2022 թ. հոկտեմբերի 19, ք. Երևան